Ս.ՇՏԻԿՅԱՆ

Ն Վ Ի Ր ՈՒ Մ

... Փոքրամարմին, արագաշարժ այդ աղջիկը մեր տուն էր գալիս գրեթե ամեն շաբաթ: Փութկոտ ու գործունյա՝ սեղանին էր թափում զանազան մեծ ու փոքր տետրեր, փոքր-ինչ շունչ էր առնում և ... տատիկիս հետ սկսում էր պարել: Ավելի ճիշտ՝ բռնելով տատիկիս ձեռքը և կանգնելով նրա կողքին, աշակերտուհու ջանասիրությամբ կրկնում էր ձեռքերի, ոտքերի, մարմնի, գլխի այն բոլոր շարժումները, որոնք պարելիս կատարում էր տատիկը: Հետո աղջիկը նետվում էր գրասեղանի մոտ, նույն արագությամբ ինձ համար անհասկա–նալի փակագծեր, քառակուսիներ, աղեղներ ու ուղղանկյուններ էր շարում իր տետրում և ստեպ-ստեպ այդ նշաններին նայելով, սկսում էր կրկնել պարը: Տատիկն արդեն քննող էր: Նա հետևում էր պարող աղջկան և խստաբարո ուսուցչուհու տոնով նկատողություններ էր անում.

-Ձեռդ լողան (սահուն) տար, Սրբուհի:

-Կզվի (կռացի) Սրբուհի, կզվի:

-Օրոր գնա, Սրբուհի:

Աղջիկը փութկոտությամբ ուղղում էր «սխալները», ինչ-որ նորանոր նշաններ էր ավելացնում տետրում և նորից էր սկսում, հարցական նայելով տատիկին.

-Մայրի՛կ, այսպե՞ս: Մայրի՛կ, եղա՞վ: Մայրի՛կ, ճիշտ արեցի չէ՞:

Ապա սկսվում էր գործի տեսական մասը: Աղջիկը պարզապես հարցախեղդ էր անում տատիկին.

-Մայրիկ, այս պարը մենակ հայե՞րն էին պարում: Միայնա՞կ էին պարում, թե խմբով: Իսկ կայի՞ն պարեր, որ միայն որոշակի տոնի ժամանակ էին պարում: Իսկ ինչո՞ւ մի քանի պարեր միևնույն եղանակն ունեն:

Երբեմն քննարկում էր տեղի ունենում: Աղջիկը պար էր «բերած» լինում և սկսում էր ներկայացնել: Տատիկը հետևում էր ուշադրությամբ:.

-Էդ հայու խաղ չի, Սրբուհի:

Եվ իսկույն հետևում էին հարցերը.

-Մայրի՛կ, ինչի՞ց իմացաք, որ հայկական պար չի: Գուցե ձեր կողմի հայերի պարը չի: Իսկ պատահո՞ւմ էր, որ հայերը ուրիշ ազգի պարեր պարեին: Իսկ...

Այսպես եմ հիշում Սրբուհի Լիսիցյանին:

* * *

Այսպես. հայն ունի իր երգը: Ծանր ու համառ աշխատանքով հանուրին այդ բանն ապացուցեց այն հոգևորականը, որին հետագայում վիճակված էր համազգային սրբություն դառնալ՝ Կոմիտաս վարդապետը: Հայն ունի իր երգը, իսկ պարը՞: Հայն ունի՞ արդյոք իր ինքնուրույն, ազգային պարը: Ցավոք Եվրոպան այս հարցի մասին բավականին որոշակի կարծիք ուներ. «Այն ինչ կոչվում է հայկական պար, իրենից ներկայացնում է անդրկով–կասյան հին ու նոր ժողովուրդների պարերի մի համախումբ»: Կամ՝ «Կարելի է խոսել հա–յոց լեզվի, որպես ինքնուրույն երևույթի մասին, բայց նույն ձևով խոսել հայոց պարերի մա–սին՝ երբեք»: Նման մեջբերումներ կարելի է էլի բերել և դրանք ներկայացնելու համար շատ էլ հեռու գնալ հարկավոր չէ: Բավական է վերցնել Լիսիցյանի՝ վերջերս հրատարակված «Հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները» կապիտալ աշխա–տության առաջին հատորը և նայել առաջին մասը: Եվ շտապենք ասել, որ եվրոպացիք շատ էլ մեղավոր չէին հայ ժողովրդի պարարվեստի մասին բացասական կարծիք ունենալու հարցում: Նրանք տեսել էին, օրինակ, «Հա քլե, հա մշկե»-ն՝ խենթ մի ստեղծագործություն, որը կարող էր ծիծաղ շարժել միայն, տեսել էին «Մամո»-ն՝ իր անհեթեթությամբ եզակի մի պար, տեսել էին... սպասեք, իսկ որտեղ էին տեսել: Տեսել էին այն ժամանակ միայն, երբ իրենց գործի բերումով պատահաբար անցել էին հայկական լեռնաշխարհով և դարձյալ պատահաբար, ականատես էին եղել որևէ հանդիսության առիթով պարողների: Ահա, թերևս, բոլորը...

... Ճիշտ կողմնորոշվելու հարցում օգնեց հայրը՝ ականավոր մանկավարժ, ազգա–գրագետ, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ստեփան Լիսիցյանը: Նա խնամքով ու հոգածու բացատրեց աղջկան, որ առաջին հայացքից անլուրջ թվացող՝ հայկական պա–րերի հավաքման ու գիտական քննության նյութ դարձնելու աշխատանքը ոչ միայն հեշտ գործերի թվին չի պատկանում, այլ նույնիսկ ամեն մեկը չէ, որ կարող է դրանով զբաղվել: Դրա համար անհրաժեշտ է թե՛ պատմա-բանասիրական հիմնավոր կրթություն, թե՛ հայ–կական և եվրոպական երաժշտական արվեստի իմացություն, թե՛ ընդհանուր պարար–վեստի տեսության ու գործնականի հիմնավոր իմացություն, թե՛ բուն հայկական երգար–վեստի ու պարարվեստի մասին մասնագիտական գիտելիքներ, թե ... շատ բան է անհրա–

ժեշտ: Ստեփան Լիսիցյանը բացատրեց աղջկան, որ ազգային պար ասվածը տվյալ ժողո–վրդի մտածողության, նրա նիստուկացի, նրա հոգեկան կերտվածքի դրսևորման ձևերից մեկն է, և դրա խորագնա ուսումնասիրությունը նշանակում է կարողանալ բացահայտել ժողովրդական մտածողության այն օրինաչափությունները, որոնք իրենց դրսևորումն են գտնում շարժումների միջոցով:

Ճիշտն ասած Սրբուհին սկզբում շատ էլ հակված չէր դեպի հայկական պարերը: Նա զբաղվում էր հայկական ազգային բնակատեղիների կառուցմանը վերաբերող հարցերով: Նույնիսկ մի աշխատություն գրեց՝ «Գյուղացիական բնակավայրերը Բարձր Հայքում» խո–րագրով, որը ընդունելության ու դրվատանքի արժանացավ: Բայց փորձառու մանկավարժ էր Ստեփան Լիսիցյանը և չէր սխալվել իր աղջկա հարցում: Սրբուհին շուտով ձեռնամուխ եղավ հայկական ժողովրդական պարերին:

Դա 1920-ական թվականներին էր:

* * *

Չկային ոչ նախորդներ, ոչ գրականություն, ոչ որևէ՝ թեկուզ փոքրիկ ձեռնարկ, ոչ այլ աղբյուր: Միակ աղբյուրը ժողովուրդն էր, ուր էլ ուղղվեց Սրբուհի Լիսիցյանը: Եվ ծայր առավ այն մեծ գործը, որ շուրջ հիսուն տարիների աշխատանք պահանջեց իր կատարողից, գործ, որ այսօր արդեն նյութական կերպարանք է ստացել երկու հատորների տեսքով, պլա–նավորված չորսից:

Սա կատարվածն էր, ավարտվածը: Իսկ մինչև այստեղ հասնելու համար ինչքան շատ եղան դժվարությունները...

Նախ՝ հարկավոր էր հավաքել հայկական պարերը: Դա նշանակում էր անհատ առ անհատ, պարող առ պարող հավաքել ժողովրդական ազգային պարեր. աշխատանք, որի բարդությունն ու աշխատատարությունը նույնիսկ ընդհանուր առմամբ դժվար է պատկե–րացնել: Ապա, եթե կարելի է գրի առնել երգը, որովհետև կան նոտաներ, եթե կարելի է գրի առնել խոսքը, որովհետև կան տառեր, ապա դեռ հայտնաբերված չէր պարը գրի առնելու և ոչ մի եղանակ: ՈՒրեմն անհրաժեշտ էր «տառեր» ստեղծել՝ հայկական պարերը գրի առնե–լու համար և գիտական հիմնավորում տալ դրանց:

Այս ամենից բացի, հարկ է նշել, որ հայկական պարերը խորապես ազգային ձև ու բո–վանդակություն ունենալով հանդերձ, դարերի ընթացքում խճողվել ու աղավաղվել էին զա–նազան հավելումների հետևանքով, իսկ դրանց մեջ մեկից ավելի էին այնպիսիները, որոնք դարձել էին անիմաստ ու անհեթեթ շարժումների ոչինչ չասող հավաքածու: Անհրաժեշտ

էր, ուրեմն, «մաքրել» հայկական պարը, ազատել խորթ լրացումներից և ներկայացնել ազ–գային-անաղարտ կերպով:

Դժվարությունները շատ էին, բայց ո՞ր մեծ գործն է առանց դժվարության ստեղծվել... Սրբուհի Լիսիցյանը աշխատում էր անդուլ ու անդադրում: Հոգևոր առաջնորդը Կոմիտասն վարդապետն էր, գործնական ղեկավարը՝ հայրը:

Սրբուհին անդուլ աշխատում էր...

* * *

Արտակարգ ոչինչ չկա Սրբուհի Լիսիցյանի տան աշխատասենյակում: Փոքրիկ գրասեղան, վրան՝ թերթեր, գրքեր, նամակներ: Պատին Կոմիտաս վարդապետի, քիչ այն կողմ հոր նկարներն են: Վիթխարի քարտադարաններ են շարված պատերի երկայնքով, որոնցում պահվում են մի քանի տասնյակ հազար անուններ այն մարդկանց, ովքեր պար են «տվել» Լիսիցյանին:

Այսօր հայը կարող է գրի առնել իր պարը նշանագրերի այն հատուկ սիստեմով, որն առաջարկել է Լիսիցյանը: Այն արդեն լայնորեն կիրառվում է: Հայն այսօր կարող է աշխար–հին ցույց տալ իր հին ու նոր վաստակները ազգային պարարվեստի բնագավառում, դրանց պատմական անցյալը, գիտական-ազգագրական մեծ արժեքը: Դա էլ է արել Լիսիցյանը:

Արվածը շատ է, անելիքը՝ ավելի շատ: Ավարտին են մոտենում երրորդ հատորի («Հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները») աշխատանքները, չորրորդի նյութերը արդեն հարկավոր է սիստեմավորել...

Ասում են Սրբուհի Լիսիցյանը ութսուն տարեկան է: Դժվար է հավատալ: Դուք երբևէ տեսե՞լ եք ութսուն տարեկան որևէ մեկի, որ աշխատի օրական տասներկու ժամ և դեռ այդ ընթացքում սլանա մերթ Արտաշատ, որովհետև այնտեղ «Շորոր»-ի ինչ-որ նոր տարբերակ է հայտնաբերվել, կամ շտապի Ժողովրդական ստեղծագործության տուն, որովհետև տեղե–կացրել են, որ ինչ-որ մեկը նոր ձևով է պարում «Դուզ խաղ»-ը: Դուք որտե՞ղ եք տեսել ութ–սուն տարեկանի, որ վերջերս Ռսկեվազում շշմեցրեց ներկաներին իր «Թռնոցի» պարով և մանավանդ «Վեր-վերի»-ով: Չէ, տարիքի հարցում այստեղ ինչ-որ թյուրիմացություն կա...

Երեկոյան Երևան

1973, օգոստոսի 3, № 181